

դացիան, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք որ շատ քիչ սպառողներ կը գտնուեն, որոնք «հաւաս» ունենան իրանց ենթարկել դատաստանական քաջքշուկների մի քանի ֆունտ կամ չիլ կեղծած ապրանքների համար...

Սակայն մինչև որ կօօպերատիւ շարժումը բաւականաչափ տարածուի ժողովրդի մէջ—անհրաժեշտ է այս «նիւթերի» մէջ յիշած միջոցներով սանձահարել մեր միջնորդ առևտրականների խարդախասիրութիւնը: Ուրեմն պէտք է շնորհակալութեամբ ընդունել պ. Թայրօլի նախաձեռնութեամբ և ջանքերով զլուսի բերած այդ լուրջ հրատարակութիւնը, որից թէ կառավարութիւնը և թէ հասարակական հիմնարկութիւնները կարող են լիակատար գաղափար կազմել ֆալսիֆիկացիայի հարցի մասին և հնարաւորութիւն ունեն ընտրել կեղծման դէմ մեր պայմաններում աւելի մեծ դիւրութեամբ գործադրելի միջոցները:

Լ. Ս.

53) А. АЛАВЕРДЯНЦЪ. „Кончина А. С. Грибоѣдова по армянскимъ источникамъ“. Спб., 1901.

1891 թուականին հրատարակուեց Գալուստ Շերմազանեանի «նիւթեր հայոց պատմութեան համար» գիրքը: Շերմազանեան մի շատ հետաքրքրական տիպ է մեր գրականութեան մէջ: Ներսիսեան զգրոցի առաջին սաներից մէկը, նա վաճառական էր, բայց շատ սիրում էր գրականութիւնը և ունի բաւական գրութեանքներ: Սիրում էր նա մանաւանդ պատմութիւնը և հաւաքում էր պատմական նիւթեր: Պարսկաստանում վաճառականութիւն անելիս, հաւաքել է տեղեկութիւններ՝ այնտեղ մեծ պաշտօնների հասած հայերի մասին: Այս տեղեկութիւններից էլ նա կազմել է իր «նիւթերը»: Այդ գրքի մի գլուխը, որ խօսում է Միրզա-Նազուր անունով ներքինացրած հայի մասին, թարգմանել է պ. Այսովերդեանց և տպագրել «Русская Старица» ամսագրում, որտեղից և արտատպել է այժմ:

Շերմազանեանը իր գրքի մէջ տալիս է զանազան տեղեկական արդիւնեց պատմութեանը: զրանք աւանդութիւններ են, բերանացի պատմութիւններ, որոնք, ինչպէս յայտնի է, մի յայտնի չափով միայն կարող են պատմական նիւթ համարուել: Ահա այդ աւանդութիւններից մէկն է և Միրզա-Նազուրի պատմութիւնը:

1829 թուականին Թեհրանում սպանուեց ռուսաց զեսպան Գրիբոեդով, որ յաւերժացրել է իր անունը ռուսաց զբաղանու-
թեան մէջ «Горе отъ ума» գեղեցիկ հեղինակութեամբ: Շեր-
մազանեանի արձանագրած աւանդութիւնը ասում է թէ զե-
սպանի սպանութեան պատճառը Միրզա-Նազուլըն էր: Սա երևան-
ցի մի հայ էր, Մարգարեան ազգանունով, որ երիտասարդ հա-
սակում գերի է ընկել պարսիկների ձեռքը, 1804-ի ռուս-պարս-
կական պատերազմի ժամանակ: Լինելով մի շատ գրասէր մարդ,
նա աչքի ընկնող գիրք է գրաւում Շահի ներքինիների մէջ:
Բայց նա չէր մոռացել քրիստոնէութիւնը, թէև մահմեդականա-
ցած էր և մտածում էր հայրենիք վերադառնալու մասին: 1828
թ. պատերազմից յետոյ երբ Գրիբոեդով, իբրև զեսպան գնում
է Պարսկաստան և պարսիկների տարած գերիներին ազատելու
և հայրենիք վերադարձնելու գործովն է զբաղւում, Միրզա-Նա-
զուլըրը դիմում է նրան և խնդրում է իրան էլ ուղարկել հայրե-
նիք: Դեսպանը ընդունում է նրան: Բայց պարսիկ ամբողջ զոր-
գրւում է որ մի մահմեդականացած համարձակւում է նորից
քրիստոնեայ դառնալ: Եւ որովհետև շարիաթը հրամայում է այդ-
պիսի մարդուն սպանել, ուստի զինուած ամբողջ թափւում է
ռուսաց զեսպանատան վրայ, ուր գտնւում էր Միրզա-Նազուլըր
և սկսում է քանդել ու աւերել: Սպանւում են զեսպանատան
բոլոր ծառայողները, սպանւում է Միրզա-Նազուլըր, ամենից յե-
տոյ և Գրիբոեդովը:

Մեր կարծիքով, այս պատմութիւնը շատ քիչ արժէք ունի
հէնց այն պատճառով, որ զեսպանի սպանութեան կարևոր և
քաղաքական տեսակէտից վերին աստիճանի ծանր գործը մի-
միայն մի հայի պաշտպանութեան հետեանք է համարւում: Ան-
կասկած, Միրզա-Նազուլըն էլ մի կաթիլ իւղ էր, որ ընկաւ վառ-
ուած բոցերի վրայ, բայց հազիւ թէ նրան կարելի լինի համա-
րել մեծ հրդեհի միակ պատճառ: Ասել այն, ինչ ասել են ալիա-
նատեաները կամ ժամանակակիցները Շերմազանեանցին, կա-
րող են այնպիսի մարդիկ, որոնք ծանօթ չեն պատմական հան-
գամանքներին, որոնք եղելութիւնների մասին կարծիք կաղ-
մում են մի կամ մի քանի արտաքին երևոյթնեքից: Գրիբոեդովի
սպանութիւնը, անկասկած, աւելի խոր պատճառներ ունէր:
Գրիբոեդովը այն պետութեան զեսպանն էր, որ խորտակել էր
Պարսկաստանի ոյժը, որ դուրս էր վճռել պարսիկներին ամ-
բողջ Անդրկովկասից: Դա մի ահագին պայքար էր, և ով ծանօթ
է թէ որպիսի կատաղութեամբ ու անհաշտ թշնամութեամբ էր
Պարսկաստանը դիմադրում ռուսներին, սկսած Կաջարեան հա-
րստութեան հիմնադիր Աղա-Մամէդ խանից մինչև 1829 թուա-

կանը, նա շատ լաւ գիտէ թէ որքան դժգոհութիւն և ատելութիւն պիտի լինէր ամբարուած Թեհրանում ռուսներին դէմ: Դեռ նոր էր վերջացել 1826—1828 թուականների ռուս-պարսկական պատերազմը, որ այնքան ստորացրել էր Պարսկաստանը, ոչնչացրել էր նրա ոյժն ու նշանակութիւնը: Ահա թէ ուր պէտք է որոնել Գրիբոեդովի սպանութեան բուն պատճառը: Եւ դրա ապացոյցն է այն, որ պարսից կառավարութիւնը ոչինչ միջոց ձեռք չառաւ ռուսաց ղեսպանատունը քանդող բազմութեան դէմ:

Կարծես բերանացի պատմութիւնների բուն արժէքը ցոյց տալու համար է որ պ. Ալահվերդեանը իր թարգմանութեան կցել է և մի այլ ականատեսի պատմութեամբ, վերցրած լրագրից: Այստեղ արդէն Գրիբոեդովի սպանութեան պատճառը Շահի հարեմի մի կին է, գերի վրացուհիներից, որ ղեսպանի միջոցով ուղղւում էր ազատուել հարեմից ու հայրենիք վերադառնալ:

Այսքան հակասական են «ականատեսների» պատմութեանը, և հէնց այդ պատճառով էլ նրանք շատ մեծ արժէք չունեն:

Պ. Ալահվերդեանի թարգմանութիւնը, ընդհանրապէս, բաւարար կերպով է կատարուած: Տեղ-տեղ մենք նկատեցինք հայերէն բնագրի լաւ չը հասկացած լինելը: Յիշենք և մի տարօրինակ հանգամանք. պ. Ալահվերդեանը հայերէն գլխատառ Զ-ն կարդացել է Զ: Այսպէս Իմամ-Ջումէ մօլլայի անունը ռուսերէնում բազմաթիւ անգամ գրուած է Իմամ-Ջումէ (Имамъ-Зумѣ, եր. 15), Զեանդեանի տեղ գրուած Զեանդեան (եր. 19):

Լ.

54) «Գէօտէ», համառոտ կենսագրութիւն (պատկերներով). կազմեց Ս. Թառայեանց, Թիֆլիս, 1900, գինն է 30 կ.:

«Բանաստեղծների թագաւոր» — Գէօթէի կատարելատիպ կենսագրութիւնը պակասում է նոյն իսկ Գերմանիայում, հանձարեղ բանաստեղծի հայրենիքում: Դա այն կենսագրութիւնն է, որ էրիխ Շմիդտի ասելով՝ «կարողանար շատ բան պատմել, բանակոուից հեռու լինէր, և գիտնական հիմնաւորութիւնը ոճի պարզութեան հետ միացնէր»:

Գէօթէն առատ նիւթ է մատակարարել գրական այնպիսի խոշոր քննադատների ինչպէս են՝ Շերէր, Հէն, Դիւնցեր, Քարլայլ, Լիւիս, Գրիմ, Բրանդէս և այլն: Բայց այս հեղինակաւոր անձնաւորութիւնների գրիչը չէ պատկերացրել Գէօթէի